

ԿՐՈՆԱԿԱՆ

ՎԱՐԴԱՎԱՐԻ ՄԵՌԵԼՈՅ

«Թիառա Քրիստո Խափանեաց զման և բաստակ արագ զիշանեան եւ զանենութիւն ինձ ձեռն Աւետարամին» (Բ. Ցիլ. Ա. 10):

Տաղաւար մը՝ Վարդավար՝ մին Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ հինգ միծ տօներէն, և մեռելոց մը: Պայծառակերպութեան տօնի լոյսովն ու լուսաւոր խորհուրդով երէկուան խանդավառներս այսօր հաւաքուած ենք հոս, Ս. Փրկիչ ազգային գերեզմանատան մէջ, այդ խորհուրդի լոյսովն տակ ոգեկոչելու համար նույիրական յիշատակն ամէն անոնց, որոնք անդարձ բաժնուած են մեզմէ: Մեռելոց բնագաւառն է հոս. հողակոյտ, գերեզման կամ զամբարան, խաչ ու յիշատակարան ամենուրեք . . . հրատոյոր մտածումներով անդոնուած է մեր հոգին, մահուան սարսուոր կը զգանք մեր էռութեան խորքը, զմեզ պատուհասող ուրուականը դժոխատիպ կը յածի մեր շուրջ ու վերև:

Մահն եմ ես. զիս կը ճանչնաք իմ խոռոշացած աչքերէս և կմախացած անդամներէս: Տիեզերքի էն անողոք և ամենատխոր օրէնքն եմ ես: Ամէն բան սուտ է և անցաւոր, ես միայն նշարիս եմ և մշտնջենական: Չեմ տեսնուիր, գոյն չունիմ, բայց մարդոց գէմքին վրայի դալուկն ու բնութեան ծոցին մէջ տեսնուած գեղանութիւնը յայտարար նշաններն են իմ ներկայութեան: Վերջապէս մարդոց զգայարաններուն տակ չեմ իյնար, սակայն համս դառնագառն է. զիս ճաշակողները կը նըւաղին միանդամ ընդ միշտ: Զեզի կ'այցեւիմ երբեկցէ, ըստ կամս, յաճախ գողիպէս, կամ որսին դարանակալ սպասող գաղանին պէս, ու զոհս կ'առնեմ ու կը տանիմ ձեր աշքին առջև ու լաց ու կոծին մէջ, արհամարհելով գիտական, բժշկական եւ սիրոյ ամէն նուաճում կամ զոնդութիւն: Իմ ձեռքերուս մէջ կամ ոտքերուս տակ գուռք կը գալարուիք, կը տրորուիք, ու կը հեծէք, բայց ձեր գալարումներն ու մահականցուներու սիրաը գալարող տագնապները ինծի հաճոյք միայն կ'առթեն: Իմ մականին միականեան իշխանութեան տակ

կ'իյնան բոլոր մահկանացուներն անխտիր. ու զձեզ կը պատուհասեմ անկողնոյ մէջ — երկար, ցաւազին ու տաժանելի ախտերու մէջ հիւծեցնելով ձեր մարմինն ու մոխիրի վրայ նոտեցնելով ձեր պարագաները. զձեզ կենազրաւ կ'ընեմ ձեր ճոխ ու չէնչող կեանքի ու պերճանքի զգլիսանքներուն, և նոյնիսկ ձեր չոր ոգեպահիկը շահելու սահմանուած քրտնաշան աշխատութեանց մէջ: Ձեր պատիւի և փառքի, մեծութեան և ցնծութեան տրամադրութիւնները կը յեղաշրջեմ ձեր բաժակի նեկտարը մոլեխինդի փոխարկելով, մինչ դուք ձեր ցնծութեան պատմուճանները կը փոխանակէք սև ըգգեստներով:

Ձեր ամէն կարգի մեռեններուն յարմար շլրիմներ կամ տապաններ կը կանգնէք, ատոնց վրայ քանդակելով անոնց անունն ու հանգամանքները, որոնցմով կը միիթարուիք. սակայն այդ բոլոր յիշատակարաններն ու գերեզմանաքարերը ձեր սկարութեան և պարութեան և իմ զօրութեան ու յաղթանակի կոթողներն են . . . Յանձախ ձեր բնակարաններէն շատ աւելի զեղեցիկ և դրախտային կարգ ու սարքով զեղեզմանատուներ կը շինէք, սակայն անոնց մէջ ես միայն կը շահապետեմ: Միայն անատաներ չէ որ կը մահացնեմ, այլ նաև համանքներ, ժողովուրդներ եւ ազգեր. քանի՞ քանի՞ մեծագոր ազգեր քայլաքայիցի, կործանեցի ու իրացուցի անհետակութիւններս:

Անթիւ են իմ շահատակութիւններս. գերա անցեալ օր զգետնեցի այնչափ սիրուած դաստիարակը, այն որ իր ամրող կեանքն ու կորսվը վատնած էր որբերու հարգագիրի և մանուկներու հոգեցոց և մտաց կերտիչի իր վսեմ և գիտակից կոչման մէջ, այդպէս սուզի մատնելով գերդաստան մը բովանդակ: Դեռ թաց են ձեր աչքերն ու աղի լեղի արցունքներ կը կլէք տեսնելով թարմ ծաղկիներով ողողուած կորակոյտն ու ոգեկոչելով յիշատակը և լուսակողի Ա. Պատրիարք Հօրո, զոր հաստարեսս և բամձարերձ կաղնի մը՝ տապալիքի երեք ժամանակներու կամակելով Ս. Արքունիք Յորբարեանց Տունը: Զեր աղօթքներուն ու պատարագներուն մէջ զեր կը յիշատակէք «Պատուական» Հայրապետն Ամենայն Հայոց, զոր էջմիածնի մէջ մահացուցի ոչ թէ միայն մարել ջանալով Ս. Առւաւորչի

պլազմող կանթեղը, այլ հոյակապ սիւն մը սապալելով Հայ Ազգին Ցունէն։ Մաւն եմ ես, ըրածներս վկայ։

«Իսկ արդ, որ ննջեցին ի Քրիստոս կորեա՞ն արդեօք։ Պողոս Առաքեալին հետ մէն մի հաւատացեալ մահուան յխորոտանքներուն առջև սահմակած՝ այս հարցումը կ'ուզզէ Ս. Եկեղեցին, և իր իշլուոված հոգին հանդարտեցնող ու իր հաւատքի զէնքերովը գօտեպնզող հաւաստի պատգամ մը կ'ակնկալէ։ Ճշմարիտն ասեմ և ոչ ստեմ։ այս մեռելոց առթիւ Վարդավառն ունի իր պատգամը լուսաւոր։ պատգամ մը, սակայն, որ իրականանալով ննջեցեալներու նկատմամբ մեր ունեցած առցիտութիւնը հաւաստի գիտութեան փոխակերպելու համար կախում ունի մեր՝ ննջեցեալներու ի յայտ բերած կեցուածքէն։ Պայծառակերպութիւնն, այսինքն երկրի և երկինքի իրարու հետ մրաւորուող բարձունքն վրան, ուր աստուածային ու մարդկային իրարու հետ ողջագործեցան, լուսաճանանչ ճառագայթներով արտաքանակալը Փրկչի մանաւանդ ներքին գեղեցիկութեանց, ու մեսիական գիտակցութեան։ Պայծառակերպութիւնն, յորում մեր լուսափայլ Տէրը կը փառաւորուի ընդ մէջ Մովզէսի և Եղիայի ու ստորեւ գետին ինկած առաքեալներու, ինչ որ կինդանի վկայութիւն մըն է Փրկիչի թէ Հին և թէ Նոր Ուխտակերու տէր ըլլալուն, Աստուծոյ փրկագործ խորութիւն միութեան, ինչպէս նաև մեր Տիրոջ թէ կինդանեաց և թէ մեռելոց աշխարհքին վրայ հաւասարապէս իշխանութիւն ունենալուն, Փրկիչը աղքարնէ կիեանքի և անմահութեան, լոյսի և փառքի։ և մեր ու ննջեցեալներու Անոր հանդէպ բռնած դիրքէն կախում ունի Անոր երկնային և անմահական կեանքին հաղորդ և ժառանգորդ ըլլալու հարցը։ ինչպէս Փրկիչը, նոյնպէս փրկուածներն իրենց երկնաւոր կեանքի այս կամ այն պահերում պարտիւ ունենալ ու կ'ունենան պայծառակերպութիւններ։ արդ, այդպիսի խորհրդաւոր պահերում, մտաւոր ու հոգեկան յափստակութեան մէջ, երկրաւոր գաղափարներով տարուած առաքեալին պէս ատաղաւա՞ր» շինել ուզեցինք, թէ խորացանք ու լուսաւորուեցանք մեր բարոյական և բանաւոր անհատի պարտականութեանց

գիտակցութեան մէջ . . . Փառքի և շըքեղութեան օրերում Թարօրի բարձրանքէն աւելի բարձր կատարներ բարձրանալո՞ւ հետամուտ եղանք, թէ մեր նայուածքը բառութեան գէպի խոնարհ վայրերը՝ գէպի Դողովթան, գէպի ծառայութեան, անձնազն հովիթեան եւ տառապանքի դաշտը՝ մեր նմանեաց բարութեան և օրհնութեան առձ բիւր մը ըլլալու տեսլականով . . . Երբ աստուածային շողն ու շառայլը լսաւորեց մեր շուրջն ու վերեւ, զայն մեր Ֆիկիգական ու կորնչական գոյացութեա՞նն թէ անմահական հոգոյ և Ս. Հոգւոյն օթևանն ըլլալու սահմանուած մեր ներաշխարհն պայծառակերպութիւնը նկատեցինք . . . Կենդանեաց և մեռելոց աշխարհներու վրայ լոյս սփոռող և Փրկիչի մեսիական կոչումը պայծառակերպութ այդպիսի սքանչելի հանգիստութեանց առթիւ Մովզէս և Եղիա մարգարէննը բանանք, թէ մեր գծուն նոր միայն . . . մարգարէննը, որոնցմէ մին Հին Աւատի միաստուածեան և բարոյացուցիւ օրէնքն իսկէ, իսկ միւսը՝ օրէնքին անփնատ և կորովի գործադրիչը նախանձամինդիր եւ նախանձայօլ . . .

Երանի՞ է մերի, ննջեցեալներուն, եթէ իրու ունեցած նենք նիւթականէն ու անձնականէն գերի ի վեր մարդկային, ընկերային եւ համամարդկային իտէաններ մեր Ս. Հաւատքի լոյսով ողողուած։ Այդ պարագային միայն «Իսկ արդ որ ննջեցինն ի Քրիստոս կորեա՞ն արդեօք» հարցումին պատասխանը խուզոր «Ո՞չ» մը պիտի ըլլայ, ի շնորհիւն մեր հոգիներուն։

Երգարև, «Եիսաւո Քրիստոս խափանեաց զման և լուսաւոր արար զկեանս և զանեղութիւն ի ձեռն Աւետարանին»։

Նա իր փրկագործ խաչելութեամբ եւ յաղթական յարութեամբ պիսափանեց մանք» և Աստուծոյ անունով ննջուներն անմահական կեանքին մէջ արժանի ըրաւ երկինքի արքայութեան։ Նա իր հրաշալի տնօրինութիւններով գլուսաւորեց կեանքը իւրայատուկ առաքելութեամբ, բանիւ և գործով, եւ փրկագործութեան խորհուրդով նոր արժէք և նպատակ տուաւ կեանքին, զայն ողողելով անդենական և անմահական կեանքի և աստանական բարոյական ու հոգեկոր կեանքի համասփիւր լոյսով։

«Ի Քրիստոս ննջոյ» քրիստոնէին հայ-

մար չէ մահուան երկիրն ու սարսափը. հողածին մարմինը՝ որ ենթակայ է Փիզիդական աշխարհի անտեղիտալի օրէնքներուն՝ մայր բնութեան ծոցը պիտի դառնայ, սակայն ցորենի մերկ հատի մը նման, որուն կենսական զօրութիւնը կը յառնէ ի գէպ ժամանակի բազմապատիկ արդիւնաւորութեամբ: ԱՄերմանի մարմին չնչաւոր եւ յառնէ մարմին հոգեորս: Խոկ հոգին, մարդկային գոյացութեան տիրապէս ազնիւ եւ միակ արժէքաւոր էութիւնը որ Աստուծմէ եկած է, առ Աստուծ կը գառնայ, երանական տեսութեան արժանի ըլլալու համար: Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ: Արգարէ, հոգին մարմինի պարաւանգութեամբ է ձերքազատուելու և գէպի կատարելութիւն ունեցած ձգտումը, գէպի անմահական կեանք նկրտիլը — զորս անհնարին է իրագործել այս անցաւոր և սահմանափակ կեանքին մէջ — ինչպէս նաև Գերագոյն Զօրութեան բարութիւնն ու արգարութիւնը բաւարար պատճառներն ու երաշխիքն են անոր անմահութեան: Սակայն բնազանցական և իմաստափառական հայեցողութիւններէ առաջ և գերազանց են նոյնինքն Փրկչին փառաւորեալ անձին օրինակն ու հաւասարիքներն այս մասին:

Յարութիւնը Փրկչիչն՝ որ իր ազնուական հոգւոյ լիութեամբ գեղեցկօրէն պայծառակերպեցաւ, կատարեալ գրաւականն է մեր ալ ունենալիք բարոյական և հոգեւոր յարութեան. անսկ արդ որ ննջեցինն ի Փրիստու, կորեան արդեօք հարցումը ուղղող միւնոյն առաքեալն է որ կը պատգամէ: ԱՅլ արդ Փրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց. քանզի մարդով եղի ման, և մարդով՝ յարութիւն մեռելոց: Արգէս Աղամաւան ամենենքին մեռանին, նոյնպէս և Փրիստոսի ամենենքին կենցանացին (Ա. Կորնթ. ԺԵ):

Ի գերայ այսր ամենայնի, մտիկ ըրէք իոյն իսքն Փրկիչին, որ կը հաւասարացնէ: անս իսկ եմ յարութիւն և կեանք, որ հաւասար յիս, թէպէտե մեռանի, կեցցէն: արձեալ, անթէ ոք զրանն իմ պահեսցէ, մի՛ ճաշակեսցէ զման ի յաւիտեան:

Ազումը մէական միարանութեան մը վանականները՝ Տրաբիսաները, իրենց ըզբազումը նկատած են միմիայն պատրաստուիլ մահուան. այս է իրենց կարգ ու կանոնը,

այս է իրենց նպատակը, երբ իրարու կը հանդիպին իրենց ողջոյն է, տեմետո մօր (յիշէ որ պիտի մեռնիս). իրենց սեղանի սկաւառակին քով գրուած է գանկ մը եւ իրենց վերարկուներուն վրայ բանուած են ոսկերոտիքներու պատկերներ յիշեցնելու համար մահը. պէտք է ամէն մէկ վանական երթայ իր գերեզմանն փորելու աշխատութեամբ ալ զրադուի ամէն օր, միշտ իր մատքին մէջ խորհրդածելով մահը: Ո՞քան մեծ և ազգեցիկ ու տպաւորիչ պիտի ըլլար երբ իրացանչելը վանական փոխանակ յելլյելելու. Թիշէ որ պիտի մեռնիս, ողջունէրն զիրար ըսեւով. Թիշէ թէ պիտի ապրիս: Եւ ասիկա կը հաւատամ թէ աւելի ճիշդ ու ճշմարիտ է, աւելի մարդկային գարաւոր իտէալն է և աստուծային կամքն է միանգամայն: Ու չէ՞ որ մենք ալ թիսուսի յարութեամբ աշխարհի մարդկութեան կը հաղորդենք ըսեւով. Թիշէ թէ պիտի ապրիս (Ղեղոնդ Եպս. Դորեան, Պարզ Քարոզներ, Բ. Հատոր, էջ 226):

Ճշմարտիւ, քրիստոնէութիւնը լոյս է և պայծառակերպութիւն, կեանք է և յաղթանակ, կատարելութիւն և անմահութիւն: Դագաղը մահուան կապուտ կողոպուտը կրող անիծեալ գործիք մը չէ այլես. այլ անմահութեան կոչուած հաւատացեալի մարմինն իր հանգստարանը փոխագրող անդրուար մը միայն: Գերեզմանն ամենակուլ անշենականին վրայ բացուած երախ մը չէ այլես, այլ անմահական կեանքի դուռը և եթ. և խաչապսակ հողակոյոյը մարդկային տկարութեան և պարտութեան և մահուան յաղթանակին յիշատակարանը չէ երբեք, այլ կեանքի և անմահութեան պատգամի բեմ իրօք:

Մեռելոց յիշատակին առջև ու Պայծառակերպութեան տօնին առթիւ այս գիտակցութիւնն ու կեցուածքն ունենանք մահուան առջև:

Աստուծ որ աղքիւն է լուսոյ, կենաց և անմահութեան, իր յաւիտեանական կայաններուն մէջ ընդունի մեր ննջեցեալներն ու լուսաւորելով պայծառացնէ զանոնք, և ամենուս պարգևէ հոգւոյն Սրբոյ միսիթարութիւնը. ամէն:

ՃԱԼԱՐԾ ՎԱՐԴԱԳԵՑ